# Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 4 | Մարտ | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 4 | Մարտ | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 4180132641 |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

## Արտադրանք, ապրանք առաքող անձ

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [10] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձ

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [16] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [17] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [18] Լրացուցիչ տվյալներ | |
| [19] Ում միջոցով — Անուն, ազգանուն | |
| Լիազորագիր — Համար | |
| Լիազորագիր — Ամսաթիվ | |
| [20] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավոր | Քանակը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 53101518բ/գ, | հատ | 1 | 39400 | 39400 |
| Ընդամենը | | | | | 39400 |

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

04/03/2019 10:01:42

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

20 դեկտեմբերի, 2018թ. — քաղ. Ստեփանավան

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Ստեփանավանի քննչական բաժնի պետ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Դ.Գ. Ղազախեցյանս, վերանայելով վարույթիս թիվ 53101518 քրեական գործի նյութերը.

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի նոյեմբերի 11-ին ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 53101518 քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված ապացույցների համակցությամբ պարզվել է, որ Ստեփանավան քաղաքի բնակիչ Գագիկ Ալբերտի Գյոզալյանը նախկինում տարբեր հանցագործություններ կատարելու պատճառով մի քանի անգամ ազատազրկման դատապարտվելու կապակցությամբ դժգոհ մնալով ոստիկանությունից, 2018 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 08:45-ի սահմաններում, ուրիշի գույքը դիտավորությամբ վնասելու՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժնի վարչական շենքի բակում կայանված <<ՌԻԱԶ>> մակնիշի, 044ՈՍ10 պետական համարանիշի ծառայողական ավտոմեքենայի առջևի աջ անիվը սուր ծակող կտրող գործիքով ծակելու կապակցությամբ նույն օրը՝ ժամը 09:40-ի սահմաններում բերման ենթարկվելով ոստիկանության Ստեփանավանի բաժին, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, Ստեփանավան քաղաքի Սոս Սարգսյան 37 հասցեում գտնվող ոստիկանության Ստեփանավանի բաժնի վարչական շենքի բակում, բերման ենթարկվելու շուրջ վիճաբանել և քաշքշել է ծառայողական պարտականությունները կատարող, նույն բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչներ, ոստիկանության ավագ լեյտենանտ՝ Հարություն Ղազարյանի, ոստիկանության լեյտենանտ՝ Բախշո Մարիկյանի և նույն բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ավագ օպեր-լիազոր, ոստիկանության մայոր՝ Կարեն Սիմոնյանի, ինչպես նաև վիճաբանությանը միջամտած նույն բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր, նշված օրվա օպերատիվ խմբի պատասխանատու ղեկավար Վարդան Թունյանի հետ, ցանկացել է խափանել իշխանության ներկայացուցիչների ծառայողական գործունեությունը, որի ընթացքում լսելով ծառայությանը չխոչընդոտելու և հանդարտվելու նրանց օրինական պահանջը, իրենից հակաօրինական գործողությունները դադարեցնելու պահանջ ներկայացրած Վարդան Թունյանի նկատմամբ ծառայողական պարտականություններն իրականացնելու կապակցությամբ գործադրելով կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն, տևական ժամանակ հնչեցնելով սեռական բնույթի հայհոյանքներ, քաշքշել և ձեռքերով հարվածներ է հասցրել վերջինիս՝ առողջությանը դիտավորությամբ պատճառելով թեթև վնասի հատկանիշներ չպարունակող պարանոցի աջ կեսի շրջանի արյունազեղման ձևով վնասվածքներ, ինչպես նաև պոկել է նրա համազգեստի բաճկոնի աջ ուսադիրը:

2018 թվականի նոյեմբերի 20-ին Գագիկ Գյոզալյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին:

*2018 թվականի նոյեմբերի 26-ին Գագիկ Գյոզալյանը << քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով ներգարվվել է որպես մեղադրյալ և նրա գտնվելու վայրը հայտնի չլինելու պատճառով նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում:*

*2018 թվականի դեկտեմբերի 05-ին Գագիկ Գյոզալյանը հայտնաբերվել և բերման է ենթարկվել Ստեփանավանի քննչական բաժին և նույն օրը նրան մեղադրանք է առաջադրվել << քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, որում վերջինս իրեն մեղավոր չի ճանաչել:*

*Բացի հիշատակված դեպքը պարզվել է, որ - Գագիկ Գյոզալյանը 2018 թվականի նոյեմբերի 08-ին՝ ժամը 21:40-ի սահմաններում գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, մուտք է գործել Ստեփանավան քաղաքի Սոս Սարգսյան 37 հասցեում գտնվող ոստիկանության Ստեփանավանի բաժնի վարչական շենքի բակ և դիտավորությամբ հասարակության նկատմամբ դրսևորելով բացահայտ անհարգալից վերաբերմունք, տևական ժամանակ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը,՝ խաթարել բաժնի բնականոն գործունեությունը, որն արտահայտվել է Գագիկ Գյոզալյանի կողմից բարձրաձայն << ոստիկանության, << հատուկ քննչական ծառայության, << դատախազության և դատարանի ծառայողների հասցեին շրջակա տարածքում գտնվող անձանց ընկալելի, շուրջ 15 րոպե տևողությամբ սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելով և իր հիշատակված գործողությունները դադարեցնելուն ուղղված ոստիկանության Ստեփանավանի բաժնի ծառայողների օրինական պահանջները չկատարելով:*

*Քրեական գործի նախաքննության ընթացքում << ԱՆ <<Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերությունից ստացվել է գրություն, համաձայն որի Գագիկ Գյոզալյանը հաշվառված է նշված ընկերության հոգեբույժի կաբինետում՝ <<Յնորագառանցանքային համախտանիշ, դեպրեսիվ համախտանիշ, խրոնիկական ալկոհոլիզմ 2-րդ աստիճանի>> ախտորոշմամբ:*

*Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզաբանելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով << քրեական դատավարության օրենսգրքի 243-246-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.*

## <u>*ՈՐՈՇԵՑԻ*</u>

1. *Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել << <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՓԲ ընկերության փորձագետներին:*
2. *Փորձաքննության ներկայացնել սույն որոշման օրինակը և մեղադրյալ Գագիկ Գյոզալյանին:*

*Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:*

- *Մեղադրյալ Գագիկ Գյոզալյանն իրեն մեղսագրվող արարքները կատարելուց առաջ, կատարելու պահին և դրանից հետո որևէ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տառապե՞լ է, թե՞ ոչ, եթե այո՞, ապա ինչպիսի՞ հիվանդությամբ, երբվանի՞ց, այդ հիվանդությունը կրե՞լ է քրոնիկ բնույթ, թե՞ ոչ, վերջինս մտք. տկարամտություն կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակ եղե՞լ է, թե՞ ոչ և արդյո՞ք նա կարող էր գիտակցել իր գործողության վտանգավորությունը և կարող էր արդյո՞ք ղեկավարել այդ գործողությունը, թե՞ ոչ:*
- *Եթե Գագիկ Գյոզալյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ առկա է*

հոգեկան այլ հիվանդագին վիճակ, ապա կարող էր արդյո՞ք մեղսագրվող արարքը կատարելու պահին այդ հիվանդությունը զրկել նրան իր գործողությունների փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունից, թե՞ ոչ, արարքը կատարելիս Գագիկ Գյոզալյանը գիտակցել է արդյո՞ք իր արարքի փաստական հանգամանքները և սոցիալական նշանակությունը՝ հանրային վտանգավորությունը և ունակ է եղել արդյո՞ք ղեկավարել իր գործողությունները, թե՞ ոչ:

- Գագիկ Գյոզալյանն իրեն մեղսագրվող արարքները կատարելու պահին գտնվել է արդյո՞ք պաթոլոգիական աֆեկտի վիճակում, թե՞ ոչ:.
- Մեղադրյալ Գագիկ Գյոզալյանը մեղսունա՞կ է, թե՞ սահմանափակ մեղսունակ, թե՞ անմեղսունակ:
- Եթե մեղադրյալ Գագիկ Գյոզալյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ առկա է հոգեկան այլ հիվանդագին վիճակ, ապա նա բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո՞, ապա ի՞նչ տեսակի:
- Եթե մեղադրյալ Գագիկ Գյոզալյանը հարկադիր բուժման կարիք ունի, ապա այդ կապակցությամբ կա՞ն, արդյոք, բուժման համար հակացուցումներ:
- Հաշվի առնելով մեղադրյալ Գագիկ Գյոզալյանի հոգեվիճակը և նրա մոտ առկա հիվանդությունը կարող էր արդյո՞ք նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները և վերարտադրել դրանք, թե՞ ոչ,:

3. Փորձագետներին իրավունք վերապահել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշմամբ առաջադրված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:
4. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատ-վության մասին:

Բաժնի պետ, արդարադատության
երրորդ դասի խորհրդական՝ Դ.Գ. Ղազախեցյան